ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N-09/26

ք. Հրազդան 22. հոկտեմբեր 2026թ.

Պատվիրատու՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ >> ի դեմս ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Հրազդանի տեղամասի գլխավոր էկոպարեկի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հակոբյանի, որը գործում է թիվ N 2-03/17-26 լիազորագրի համաձայն այսուհետև Պատվիրատու՝ մի կողմից և «Փուրթո» ՍՊԸ ի դեմս տնօրեն Մ. Երվանդյանի՝, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ Կապալառու,, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել մարզ Կոտայք համայնք Հրազդան Հրազդան ք. Հարավային թաղամաս Շահումյան փողոց 2 շինություն հասցեում արտաքին և ներքին գազաֆիկացման աշխատանքներ, հաշվիչի, հանգույց-արկղի տեղադրում ինչպես նաև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում այդ թվում հրշեջ ակտի ձեռքբերում:

1.2Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին և հաստատված նախագծին համապատասխան:

1.3Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքը սկսվում է Պայմանագրի ստորագրման օրվանից իսկ կատարման վերջնաժամկետը սահմանվում է երկու ամիս:

1.4 Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքի կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը: Թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

2.2.3 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

2.4. Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Աշխատանքի 100 տոկոսը կատարել անձամբ՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ 2 տարի սպասարկման երաշխիքով տեխնիկական առաջադրանքին համապատասխան

2.4.2 Սույն պայմանագրում նշված ժամկետում ապահովել Աշխատանքի կատարումը: Սահմանված ժամկետից ուշացման դեպքում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել տույժը սույն պայմանագրի գումարի 0.15%- չափով:

2.4.3 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և սույն պայմանագրի պայմաններին:

2.4.4 Սույն պայմանագրի նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3. Աշխատանքի գինը և հանձնման և ընդունման կարգը

3.1 Սույն պայմանագրի գինը կազմում է՝ 1218000 (մեկ միլիոն երկու հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ –ն : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետում նշված գումարից 50%-ը Պատվիրատուն վճարվում է Կապալառուին որպես կանխավճար: Մնացած գումարը վճարվում է համապատասխան հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելու պահից՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

3.3 Պայմանագրի գինը Պատվիրատուն Աշխատանքը ամբողջ ծավալով ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4 Աշխատանքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

3.5 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքը կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

3.6 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

4.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.3Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.4 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կապալառու
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ >>	«Փուրթո» ՍՊԸ
Հասցե՝ Արմենակյան փ. /129 ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ 0047 Երևան Երևան Հայաստան	Հասցե՝ ք. Հրազդան Միկրոշրջան թաղամաս 2.202 բն.12
ՀՎՀՀ 00476409	ՀՎՀՀ 03006321
	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ N2/3
Երևանի թիվ 1 ՏԳԲ	Հ/Հ 163158036877
Հ/Հ 9000110232265	
Տնօրեն՝ _____ Լ.Ա. Գ. Հակոբյան	Տնօրեն՝ _____ Մ. Երվանդյան
Digitally signed by HAKOBYAN GEVORG 3503950311 Date: 2026-01-22 16:01:39	Կ.Տ